ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	**Սպիտակ**
ՄԱՐԶ	**Լոռի**

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սպիտակի տարածքը եղել է հին բնակատեղի, որի պատմությունը սկսվում է դեռևս մ.թ.ա. IV-I հազարամյակներից: Սպիտակում, համանուն նախկին շրջանի Մեծ Պարնի, Ջրաշեն, Գոգարան, Արևաշող գյուղերում հայտնաբերված նեոլիթյան գործիքներն ու կենցաղային իրերը՝ քարե հատիչները, կացինները, դանակները, նետասլաքները, աղորիքները, արձանիկները և գտնված մյուս առարկաները վկայում են այդ ցեղերի հասարակական բարձր աստիճանը:

Սպիտակում՝ Սարդարի կոնդ բլուրում հայտնաբերվել են բրոնզե դարաշրջանի (ք.ա. 3-2-րդ հազարամյակում) բնորոշ առարկաներ՝ պղնձե և բրոնզե նետասլաքներ, դաշույններ, սև փայլեցրած կավախեցե ամաններ և այլ առարկաներ: Տարածքի բնակիչների կյանքը վերընթաց զարգացում է ապրել նաև ք.ա. 1-ին հազարամյակում, երբ այդ տարածքը մտել է Ուրարտու պետության կազմի մեջ (ք.ա. 7-րդ դար):

Երվանդունիների (ք.ա. 4-2-րդ դարեր) և Արտաշեսյանների (ք.ա. 2-1-ին դարեր) թագավորության ժամանակ նաև Սպիտակի այժմյան տարածքը եղել է Հայաստանի, ավելի ուշ՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի կազմում: 9-րդ դարավերջին մտել է Բագրատունյաց թագավորության, 972-1118թթ.-ը՝ Կյուրիկյան թագավորության, իսկ 12-րդ դարավերջից՝ Սելջուկյան թուրքերից ազատագրված հայկական հողերի հետ՝ Զաքարյանների իշխանապետության մեջ:

14-18-րդ դարերում Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան մի քանի գավառակների հետ միացվել է Ռուսաստանին, տարածքը կոչվել է Համամլուի գավառակ և մտել նախ Լոռի-Փամբակի, ապա՝ Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքը մինչև 1949թ. կոչվել է <<Համամլու>> կամ <<Համամլի>>, որը հավանաբար առաջացել է պարսկերեն <<համամ>> (բաղնիք) բառից: Համամլուի նոր անունը՝ Սպիտակ, կապված է քաղաքի շրջակայքում եղած կրաքարի հանքերի հետ:

Համամլուի շրջանը, որպես վարչական միավոր ստեղծվել է 1937թ.-ի դեկտեմբերի 31-ին: Սպիտակը 1960թ.-ին ստացել է քաղաքի, 1971թ.-ին՝ հանրապետության ենթակայության քաղաքի կարգավիճակ:

Համամլիում դեռևս 19-րդ դարի կեսերից գործել են ծխական դպրոցներ: Նախասովետական Համամլուն, բացի մի քանի դարբնոցից, ջրաղացներից ու ձիթահանքից, արդյունաբերական ոչ մի ձեռնարկություն չուներ: Բնակիչները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Բնակավայրի արտադրական առաջին ձեռնարկությունը՝ պանրի գործարանը, կառուցվել է 1937թ.-ին: 1947թ. առաջին արտադրանքն է տվել շաքարի գործարանը, որն արտադրական յուրաքանչյուր սեզոնում վերամշակում էր 130 հազար տոննա շաքարի ճակնդեղ, արտադրում 14 հազար տոննա բարձրորակ շաքարավազ: Հետագայում կոմբինատի կարգավիճակ ստացած ձեռնարկության մեջ ներառված կիտրոնաթթվի արտադրամասի թանկարժեք արտադրանքն առաքվում էր ոչ միայն Խորհրդային Միության հանրապետություններ, այլև արտասահմանյան մի շարք երկրներ: Արտասահմանյան 21 երկիր (Ռումինիա, Իրաք, Վիետնամ, Մոնղոլիա, Թուրքիա, Կուբա, Մալի և այլն) և սովետմիության մի շարք խոշոր քաղաքներ էին արտահանվում <<Հայվերելակմեքենա>> միավորման մարդատար և բեռնատար վերելակներ: Այստեղ աշխատող բանվոր ծառայողների թիվը հասնում էր 700-ի:

Գործում էր Հացամթերքի կոմբինատը, կարի արտադրական միավորումը, տրիկոտաժի, կոշիկի ֆաբրիկաները, ռետինատեխնիկական իրերի և հացի գործարանները: Մինչև 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը Սպիտակը արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացած քաղաքներից էր, որտեղ գործում էր 14 արդյունաբերական ձեռնարկություն: Ուներ 7 հանրակրթական, գեղարվեստի, երաժշտական, մարզական դպրոցներ, տեխնիկում, պրոֆտեխուսումնարան, 10 մսուր-մանկապարտեզ, հիվանդանոց, զբոսայգի, մշակույթի տուն, գրադարան, կինոթատրոն, թանգարան, մարզադաշտ, կապի հանգույց, տպարան:

1988 թվականը ճակատագրական եղավ Սպիտակի կյանքում: Դեկտեմբերի 7-ին, ահեղ երկրաշարժի հետևանքով, վայրկյանների ընթացքում երբեմնի արդյունաբերական քաղաքը վերածվեց փլատակների, զոհվեց ավելի քան 4000 մարդ:

Սպիտակցին երախտագիտությամբ է հիշում բարի կամքի բոլոր երկրներին ու ժողովուրդներին, սփյուռքի մեր հայրենակիցներին, անհատ մարդկանց ու կազմակերպություններին, ովքեր իրենց անգնահատելի օգնությունն ու աջակցությունը բերեցին երկրաշարժի հետևանքների վերացման, ավերված քաղաքի վերականգնման գործին:

Բարեկամ ժողովուրդների օգնությամբ վեր հառնած Սպիտակն այսօրվա իր տեսքով, թաղամասերի անվանումներով ժողովուրդների բարեկամության իրական խորհրդանիշ է:

Չնայած նրան, որ Սպիտակում վերականգնողական մեծ աշխատանքներ են կատարվել (վերականգնվել ու գործում են բոլոր հանրակրթական, երաժշտական, գեղարվեստի և մարզական դպրոցները, բուժհաստատությունները, սպասարկման ոլորտի շատ կազմակերպություններ, վերականգնվել է բնակֆոնդի մի մասը), սակայն մինչև օրս վերացված չեն սարսափելի աղետի հետևանքները, դեռևս ամբողջովին լուծված չէ անօթևան բնակիչներին բնակարանով ապահովման խնդիրը, կան չլուծված սոցիալ-տնտեսական բազում խնդիրներ՝ փողոցների բարեկարգում և լուսավորություն, ոռոգման, խմելու ջրի ջրագծերի, կոյուղագծերի կառուցում և վերանորոգում: Սպիտակում խիստ կարևորվում է աշխատատեղերի ստեղծման խնդիրը:

2. **ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

Մայրուղիների երկարությունը 15,3 կմ է:

Սպիտակը գտնվում է Վանաձոր – Գյումրի և Վանաձոր –Երևան ավտոմոբիլային մայրուղիների խաչմերուկներում, Փամբակի հովտում,Փամբակ գետի և դրա վտակ Ջրաշենի ափերին, ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա:Հեռավորությունը մարզկենտրոնից 19 կմ է, իսկ մայրաքաղաքից 97 կմ : Քաղաքի վարչական տարածքը 6066,75 հա է : Սպիտակի տարածքը լեռնային է, հյուսիսում ձգվում են Բազումի, իսկ հարավում Փամբակի լեռնաշղթաները: Ռելիեֆն ունի էրոզիոն-դենուդացիոն կառուցվածք:Տարածքի երկրաբանական կառուցվածքը բարդ է, ձևավորված է նստավածքային հրաբխածին, ներժայթքային ապարներից՝ կրաքարեր, տուֆածին ապարներ, բազալտ ու ավազաքարեր: Երկրաշարժաբանական առումով տարածքը համարվում է սեյսմիկ ակտիվ գոտի՝ աղետաբեր

երկրաշաժի բարձր հավանականությամբ (9 և ավելի բալ) :

Սպիտակի տարածքով անցնում է Թբիլիսի- Վանաձոր- Սպիտակ-Մասիս երկաթգիծը:

Սպիտակ համայնքի տարածքը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում:Ձմեռը մեղմ է, ամառը՝ չափավոր տաք: Ամենացածր ամսեկան միջին ջերմաստիճանը հունվարին է՝ -6^{0}C, նվազագույնը՝ -30°C, ամենատաք ամիսը հուլիսն է՝+18^{0}C է, առավելագույնը +33^{0}C: Միջին հաշվով 0^{0}C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը Սպիտակ քաղաքում կազմում է 270 օր: Տարեկան տեղումների միջին մակարդակը 500-550մմ է, գոլորշունակությունը՝ 900 մմ: Ձնածածկույթի միջին հաստությունը 18-20 սանտիմետր է, ձնածածկույթով օրերի թիվը75-80:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	500-550 մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-6
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	+18

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	0
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սպիտակ
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	97
3.2) մարզկենտրոնից (կմ)	19
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	Վրաստանից 40 կմ, Թուրքիայից 46 կմ . Ադրբեջանից 72 կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	Նախկինում շրջկենտրոնը եղել է Սպիտակ քաղաքը:
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	Միջպետական նշանակության ավտոճանապարհ անցնում է Սպիտակ համայնքի վարչական տարածքով:
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	Երկաթուղային կայարանը գտնվում է Սպիտակ համայնքի վարչական տարածքում:
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1550

5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	6066.75	
6. Սահմանակից համայնքների անվանումները	Սարահարթի,Շենավանի,Արևաշողի,Քարաձորի,Ղուրսալիի, Լեռնանցքի, Ջրաշենի,Սարամեջի, Կաթնաջուրի,Գեղասարի գյուղական համայնքները:	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	municipalityspitak@gmail.com	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	WWW.spitak.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	055024343	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	2-25-00	
11. Համայնքի հեռախոսային կոդը	0255	
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո	
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	1804	
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո	

5. **ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ**, **ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	17172
2. Գրանցված ծնունդների քանակը	114
2.Մահացության դեպքերի քանակը	106
3.Ամուսնությունների քանակը	49
4. Ամուսնալուծությունների քանակը	16
5. Տնային տնտեսությունների թիվը	4542
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	1608
7. Կենսաթոշակառուների քանակը	3408
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	1797

6. **ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ**, **ԿՐԹԱԿԱՆ**, **ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1

2. Արվեստի (գեղարվեստի) դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	3
5. Հանրակրթական դպրոցների քանակը	7
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	1
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	1

7. **ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

	2018**թ**.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	93601.65
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	108
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	2446

8. **ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	6066.75
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	4117.9
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1257.85
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	835
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	42
7. Խոզերի գլուխաքանակը	122
8. Գյուղատնտեսական տեխնիկա	9
8.1 տրակտորներ (քանակը)	9
8.2 կոմբայններ (քանակը)	0
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	328

9. **ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	36
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	96.8
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	141
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	121

6.2 Էքսկավատորների քանակը	10
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	4
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	3
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	2
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	Մ3-9,6 Մ7-5,7
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	5
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10. **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1.Ընդամենը եկամուտներ	370503.0	369198.4
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	59828.1	56591.3
2.1 հողի հարկ	4200.	4880.0
2.2 գույքահարկ	55628.1	51711.3
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	278638.3	252698.4
3.1 դոտացիա	236063.6	236019.6
3.2 սուբվենցիա	42574.7	16678.8
4. Մուտքեր հողի օտարումից	21653.0	10074.1

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	376651.7	357239.2

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	45709.0	12614.3

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	112613.1	41734.1

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	49 35
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	94642.6
3. Ավագանու անդամների թվաքանակը	15

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Քաղաքաշինության ոլորտ	
1. Համայնքի տարածական համաչափ զարգացումը ապահովելու համար խիստ անհրաժեշտություն է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի բացակայություն	1.Պետական աջակցությամբ կամ դոնոր կազմակերպությունների հովանավորությամբ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակումը և հաստատում:
2.Անշարժ գույքի հասցեավորում:	2.ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ ԱՎՎ Սպիտակի անձնագրային բաժանմունքի հետ համագործակցությամբ նոր հասցեավորման անցկացում, բնակչությանը սահմանված վճարից ազատելու սկզբունքով:
3.Համայնքային գերեզմանատան տարածքի սահմանազատում, ընդլայնում և արդեն զբաղեցված 2.5հա տարածքի նպատակային նշանակության փոփոխություն, տարածքի բարեկարգում, գրունտային ճանապարհների վերանորոգում:	3.Չափագրման աշխատանքների իրականացում, հողի նպատակային նշանակության սահմանված կարգով փոփոխություն, արտերկրում ապրող սպիտակցիների աջակցությամբ ցանկապատման, ճանապարհների բարեկարգման աշխատանքների իրականացում:
4.Համայնքի կենտրոնական հատվածը Քրքք Քրքորյան թաղամասին միացնող հուշարձան-կամուրջի վերանորոգում:	4.Որպես պատմամշակութային հուշարձան և Լեռնանցք համայնքը սպասարկող միակ ճանապարհ պետակա միջոցների հաշվին

	հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
5.Թորոսյան 26 շենքի բակային հատվածի վթարային հենապատի հիմնանորոգում, Խնկոյան փողոցից Այգեստան թաղամաս տանող ճանապարհի նոր հենապատի կառուցում:	5. Համայնքի ֆոնդային միջոցների առկայության դեպքում, սուբվենցիոն միջոցների ներգրավմամբ ծրագրի իրականացում:
6.Ինքնակամ կառույցների հաշվառում, օրինականացում:	6.Հանձնաժողովի ստեղծում, հաշվառման և օրինականացման աշխատանքների իրականացում:
7.Երկրաշաժի հետևանքով անօթևան մնացած, տրոհված, սոցիալապես անապահով տնականներում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիր	7.Կառավարության աջակցությամբ մշակված ծրագրերի իրականացում, այդ թվում սոցիալական բնակարանների կառուցում:
Ջրամատակարարման ջրահեռացում	
1.Բանավան թաղամասում ջրամատակարարման, Տեր-Սիմոնյան փողոցում ջրահեռացման համակարգերի կառուցման խնդիր:	1. Բանավան թաղամասի ջրամատակարարման նպատակով Վեոլիա ջուր ՓԲԸ-ի հետ աշխատանքների կազմակերպում:
2. Բնակչությանը խմելու որակյալ ջրի շուրջօրյա մատակարարում:	2. Ուսումնասիրության կատարում, նախագծի պատվիրում, սուբվենցիոն միջոցների ներգրավմամբ ծրագրերի իրականացում:
3.Կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցում:	3.Տարածաշրջանի հարակից համայնքների հետ համատեղ ծրագրի մշակում, դոնոր կազմակերպությունների ներգրավմամ ծրագրի իրականացում:
ԷՆԵՐԳԱՏԵՍԿԱՐԱՐՈՒՄ	
1.Գոյություն ունեցող արտաքին լուսավորության ցանցի տեխնիկական վերազինում, նոր համակարգերի կառուցում էներգախնայող լուսատուների և այլ ժամանակակից մեթոդների ներդրում:	1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում, սուբվենցիոն ծրագրի և համայնքի միջոցներով իրականացում:
2.Գոյություն ունեցող արտաքին էլեկտրամատակարարման ցանցի վերանորոգում:	2.Համագործակցություն Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ- ի հետ:

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	
1.Հարավ Արևմտյան թաղամասի գազատարի կառուցում	1.Նախագծի պատվիրում, համայնքի միջոցներով իրականացում:
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ	
1.Շահագործվող հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմի ֆիզիկական մաշվածություն : 2.Համայնքում կենցաղային աղբի տեսակավորման անհրաժեշտություն: 3.Համայնքային աղբավայրի գրունտային ճանապարհի վերանորոգում և աղբավայրի տարածքի ցանկապատում, աղբավայրի փակում, նոր ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխանող աղբավայրի կառուցում:	1.2.3.Դոնոր կազմակերպությունների կամ վարկային միջոցների ներգրավմաբ նոր ժամանակակից հատուկ մեքենա սարքավորումների ձեռք բերում, ցանկալի է այս աշխատանքներում մասնավոր կազմակերպության ներգրավումը: Նոր աղբավայրի կառուցում:
ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	
1.Շրջակա բնական միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածության նվազեցմանն ուղղված մեխանիզմների և միջոցառումների մշակում և իրականացում:	1.Բնակչության իրազեկման լայնածավալ աշխատանքների իրականացում:
2.Նոր կանաչ տարածքների հիմնման և պահպանման միջոցառումների իրականացում:	2.Ամեն տարի համայնքի բյուջեով կանաչապատման աշխատանքների իրականացում:
3.Գետերի ափամերձ տարածքներում, ոչ սահմանված վայրերում աղբաթափության կանխում:	3.Շաբաթօրյակների միջոցով եղած աղբի մաքրում , բնակչության ինքնագիտակցության մակարդակի բարձրացում, ոչ սահմանված վայրերում աղբաթափությունը կանխելու աւղղությամբ:
4. Թափառող կենդանիների վնասազերծում:	4.Պետական ծրագրի մշակում:

ԲՆԱԿՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 1.Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների մասնավորեցման:	1, 2 ՀՀ կառավարության «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» ՀՀ օրենք (ՀՕ 66) 30.05.2000թ :
2.Բազնաբնակարան բնակելի շենքերում տեղակայված նկուղներում, կիսանկուղներում, բացվածքներում գործող առևտրի և սպասարկման օբյեկտների տարածքների նկատմաբ իրավունքի պետական գրանցում:	
3.Բազմաբնակարան բնակելի շենքերի ջրահեռացում:	3.Իրականացնել բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի պահպանման համար գանձվող և բնակարանների սեփականատերերի համաներդրման միջոցով:
4. Համայքից բացակայող բնակիչների գույքահարկի, հողի հարկի ապառքների հավաքագրման խնդիր:	4.Վարչական միջոցների կիրառում ՀՀ կառավարության կողմից:
5.Քաղաքացիների հաշվառման աշխատանքների կազմակերպում	5.Համագործակցություն ՀՀ ԱՎՎ Սպիտակի անձնագրային բաժանմունքի հետ:
6.Բակային տարածքների անբարեկարգ վիճակ,	6.Համայնքի բյուջեի և սուբվենցիոն միջոցների ներգրավմամբ:
7.Մարզադաշտի բացակայություն:	7. Մարզադաշտի կառուցում ֆուտբոլի ֆեդերացիայի և բարեգործների աջակցությամբ:
ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 1. Միջպետական նշանակության Մ-3 մայրուղու համայնքավ անցնող հատվածի հիմնանորոգում	1. ՀՀ տրանսպորտի նախարարության հետ համագործակցությամբ ՀՀ պետական միջոցներով:
2. Հասարակական տրանսպորտի հարմարեցում՝ հաշմանդամների սպասարկմանը:	2.Համագործակցություն գծերը սպասարկող կազմակերպությունների հետ:

3. Սպիտակ համայնքի փողոցների ասֆալտապատում, հիմնանորոգում:	3.Պետական աջակցությամբ իրականացվող հարտապ ծրագրերի և համայնքի բյուջեի միջոցներով:
4. Փողոցների երթևեկությունը կարգավորող նշանների կահավորում:	4.Կարգավորելու նպատակով նախագծի կազմում, համայնքի միջոցներով կահավորում:
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՊԱՅԻՆ, ՀԱՂՈՐԴԱԿԱՆ, ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆԱՅԻՆ ԲԱՅՑ ՏՈՒՐՔԱՅԻՆ	
1.Նոր կարուսելների ձեռքբերում, տեղադրում:	1.Համապատասխան ծրագրով դիմել դոնոր կազմակերպությունների:
2.Զբոսայգու տարածքի ընդհանուր բարեկարգում, կանաչապատում:	2. Համայնքի բյուջեի միջոցներով դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:
3.Խաղահրապարակների նորոգում, նորերի տեղադրում:	3. Համայնքի բյուջեի միջոցների հաշվին:
4.Մերձակա անտառային գոտու պահպանում, խնամք և վերարտադրություն:	4.Հայանտառ ՊՈԱԿԻ կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում:
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	
1.ՀՀ կառավարության 25.10.2012 թվականի թիվ 1351-Ն որոշման համաձայն սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի ձեռքբերում: 2.Բնակչության իրազեկում:	1,2 Համագործակցություն ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության հետ:
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	
1. Ոռոգման ցանցի վերանորոգում:	1.Համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների առկայության դեպքում,սուբվենցիոն միջոցների ներգրավմամբ:
2.Կենդանիների հաշվառման և համարակալման համակարգի ներդրում:	2. Համագործակցություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ:
3.Արոտավայրերի խմոցների կառուցում	3. Կատարել ուսումնասիրություն, կազմել ծրագիր ներկայացնել դոնորներին:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	
1.Չկանոնակարգված բացօթյա առևտուր,	1.ՀՀ ոստիկանության հետ համագործակցությամբ կանոնակարգում:
2. Համայնքի փողոցներում տեղակայված կրպակների (տաղավարների) ոչ հրապուրիչ և անբարեկարգ վիճակ,	2.Ոչ սահմանված վայրում տեղակայված տնակների , տաղավարների հեռացում:
Սոցիալական ոլորտ	
1. Փոքր և միջին բիզնեսի խթանում, աշխատատեղերի ստեղծում	1.ՏԻՄ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում:
2. ***Հաշմանդամություն ունեցող անձանց*** իրավունքների պաշտպանություն, հավասար պայմանների ու հնարավորությունների ստեղծում:	2.Հասարակական սպասարկման օբյեկտներում թեքահարթակների կառուցում, հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծում:
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ/ ՄՇԱԿՈՒՅԹ	
1.Մանկապարտեզի նոր՝ տիպային շենքի կառուցում 150 երեխայի համար:	1.Տաշիր բարեգործական հիմնադրամի հետ համագործակցություն:
2.Գեղարվեստի և Երաժշտական դպրոցների շենքերի ներքին հարդարման աշխատանքների իրականացում:	2.Համայնքի բյուջեի միջոցներով դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:
3.Երաժշտական գործիքների (քանոն 2 հատ,քամանչա,թառ,ջութակ 1/4, 2/4, 3/4, դաշնամու մեծ դահլիճի, դաշնամուրի աթոռներ 6 հատ, դուդուկ 2 հատ, շվի 2 հատ) ձեռք բերում:	3.Համայնքի բյուջեի միջոցներով, դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:
4.Երգչախմբի և նվագախմբի սաների համար համերգային արտահագուստների ձեռքբերում:	4.Համայնքի բյուջեի միջոցներով, դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:
5.Մշակույթի տան շենքի նկատմամբ իրավունքի ձեռք բերում:	5.Կազմել և ներկայացնել ծրագիր ՀՀ Կառավարության որոշման համաձայն մշակույթի տան շենքը համայնքին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու համար:
6.Մշակույթի տան թատերական խմբի և նոր համույթների ստեղծում:	6.Մասնագետների վերապատրաստում, նոր մասնագետների ներգրավում: